



70. ԷՐԿՈՒ ՇԱՌ, ԻՐԵՔ ԽՐԱՏ

Ժամանակով մե աղքատ մարթ ա ըլնում: Ուներ մե տղա:

Տեսավ, որ աբրել չեն կարողանում, կնգան ասավ.—Ա՛յ կնիկ, էս տեսակ աբրել չի ըլնի: Տղեն թողում եմ քո հույսով, ես էթում եմ մե յանի աշխատեմ: Ասում են՝ Բաքու աշխատանք շատ կա: Տասը տարի չեմ գա: Որ տասը տարին թմմավ, չէկա, կուզես՝ գնա՝ մարթի, կուզես՝ մի՛ գնա, քո գործն ա: Կնիկը ճամբի հաց թխեց, մարթը բռնեց Բաքու տանող ճամբեն: Էն վախտ ավտո չրկար, պոեզ չրկար, ոտով գնաց: Մե ամիս ճամբա գնաց, հասավ Բաքու: Գնաց իրեք ամիս սովորավ, դարցավ սուքանչի: Լավ սուքանչի դարցավ, լավ էլ փող էր աշխատում: Հուրիչներն ամիսը ստանում ին չորս մանեթ, էսի ստանում էր ութ մանեթ: Տասը տարվա մեջ վեց հարի մանեթ փող ետ քցեց, ռաչչոտ արավ, էկավ տուն: Որ տուն էր գալում, դաշտի մեջ մե քարի տակ նստավ, փողերն հաշվեց, ամեն ջերը էրկու հարի մանեթ դրեց, էկավ մե մեծ գեղ: Դու մի ասա, էտ քարի հետևը մե կնիկ էր նստուկ: Էս մարթի փողերը տեսավ: Մարթը որ գյուղ մտավ, էս մարթի յախեն բռնեց:

—Փողերս տո՛ւր, հո՞ւր ես տանում:

—Ի՞նչ փող, ա՛յ կնիկ, հո շառ չե՞ս:

Տվին կովան, գնացին դատավորի մոտ:

Էս կնիկն ասավ.—Դատավո՛ր, էսի իմ մարթն ա: Տանից խոսվեր ա, էթում ա, փողերն էլ տանում ա, բա ես ու էրեխան ինչո՞վ աբրենք, փողը թո՛ղ տա:

—Էս կնգան ես չեմ ճանաչում, դատավո՛ր, շառ ա անում, ես այսինչ չըջանից եմ, կնիկ ու էրեխա ունեմ:

—Կարող ա հուրիչ տեղ է՞լ կնիկ ու էրեխա ունի, թո փողերը տա էթա, - ասավ կնիկը:

—Ինչքա՞ն փող ունեք, բողոքո՞ղ, —ասավ դատավորը:

—Ունենք 600 մանեթ, իրեք հարիը՝ իրեքանոց, իրեք հարիը՝ տասսանոց: Ես եմ, հինքն ա, տղեն ա, ամեքիս էրկու հարի մանեթ ա անում, թո չորս հարիը տա էթա, ուզում ա կնգա մոտը էթա,

ուզում ա ջայնամը էթա, ետ չըգա: էտ տեսակ մարթը չըլնի, չէրևա, որ քառասուն տեղ կնիկ ա պախում:

Դատավորը տեսավ՝ կնիկը փողերի հաշիվ գիղա, ասավ. — Ամբաստանյա՛լ, փողերտ հա՛ն:

Փողերը հանեց, էս կնգա ասածը, հարիր իրեքանոց, եռեսուն տասսանոց:

— Կնիկտ դուզ ա ասում, ա՛յ մարթ, չորս հարիր մանեթը տո՛ւր կնկատ:

— Կնիկը փողը վերցուց, ուրախ-ուրախ գնաց:

էս մարթը դուս էկավ, նստավ մե պատի տակ, սկսեց լացը: Մե կնիկ լսաց, էկավ մոտ:

— Ախպե՛ր, ի՞նչ ա պատահե, հընչի՞ ես լալում:

— Հալը-դրսեն էսենց, — ասավ էս մարթը:

— Լա՛վ, դե լսա՛, հըմա իմ անունը չըտաս, քո փողը ետ կըստանաս, որ իմ ասածը կատարես:

— Ասա՛, քույրի՛կ, քո ոտը պաչեմ, — ասավ էս մարթը:

— Էն ա խաղացող իրեք տղեն տենո՞ւմ ես: Էն կապուտ բլուզովը քո փողը տարող կնգա տղեն ա: Գնա բռնա՛, բե՛ր դատավորի մոտը, ասա՛. «Իմ տղեն տանում եմ, մոր մոտը չեմ թողի»: Ես էլ մորը հիմաց կըտամ, կըգա, տղեն կըվազնի մոր յանը, գործը կըպարզվի:

էս մարթը գնաց, տղին բռնեց բերեց դատավորի մոտ, ասավ, որ՝ իմ տղին տանում եմ:

Տղեն լալում ա, ճվում. — Սուլթ ա ասում, դատավո՛ր, ես էս մարթի տղեն չեմ, ես հեր էլ ունեմ, մեր էլ:

— Շա՛ն տղա, դու իմ տղեն ես, կըտանես:

— Սուլթ ա ասում, դատավո՛ր, ես Թևանանց Արզումանի տղեն եմ, մերս Սալաթն ա, Բլբազ են ասում: Դատավորը գործն էր քննում, էն կնիկը վազավ Բլբազի տունը, տեսավ՝ մարթ ու կնիկ կայներ են:

— Ախպե՛ր Արզման, աղչի՛ Բլբազ, մե մարթ ձեր տղեն տարավ, հասե՛ք: Տարան դատարանը:

Մարթ ու կնիկ վազան: Տղեն որ հորն ու մորը տեսավ, վազավ մոտները:

— Հայրի՛կ, մայրի՛կ, էս մարթը ընձի բռնեք ա, ասում ա, որ ես հիրա տղեն եմ:

էս մարթը քաշում ա, որ հիրա տղեն ա, Արզումանն ու մերը քաշում են, որ հիրանց տղեն ա:

— Դատավո՛ր, էս կնիկն իմն ա, — ասավ էս մարթը:

— Իմ կնիկն ա, — ասավ Արզումանը:

Դատավորը էս կնգան ասավ.—Էս մարթի չորս հարիր մանեթը տո՛ւ, թե չէ կրղրկեմ բերթը, կրփտես, լի՛րփ, անամո՛թ:

Էս կնիկը փողը տվեց, տղի ձեռից բռնեց գնաց:

Ըստոնք որ գնացին, էս մարթն ասավ.—Դատավո՛ր, ես օտարական եմ: Փողը քո մոտ մնա, էթամ, մե մարթ բերեմ, ընձի ճամփեն նշանց տա, էս գեղից էթամ: Շառոտ գեղ ա:

Գնաց իրեք մանեթ տվեց, մե մարթ բռնեց, էկավ: Հիմի էլ դատավորն ա ասում, որ՝ փողը դու տարար, կորի գնա՛, էլ չէրևաս:

Էս մարթը դուս էկավ, գնաց մե քիչ էն յանը, նստեց լացավ:

Էտ վախտը մե խորոտ կնիկ էկավ, էս մարթին ասավ.—Ախպե՛ր, հընչի՞ ես լալում:

—Էսենց, էսենց, քույրի՛կ, հիմի էլ դատավորը փողս չի տալում:

—Լա՛վ, ես կըմտնեմ դատավորի մոտը, իրեք հրոպե հետո դու կըմտնես, կասես՝ դատավո՛ր, փողս տո՛ւր:

Մե տղի էլ ասավ.—Տղա՛, որ էս մարթը դատավորի մոտ որ մտավ, քիչ հետո դու նե՛րս մտի, ասա՛՝ մորքո՛ւր, աչքտ լուս, մարթտ էկավ:

Էս խորոտ կնիկը ներս մտավ: Որ ներս մտավ, դատավորը վեր կացավ քաղաքավարի ընթուռնեց, հրավիրեց նստելու:

—Դատավո՛ր, —ասավ էս կնիկը, —մարթս իրեք տարի ա գնացե, չի գալիս, դու էլ իրեք տարի ա կպեր ես յախես, չես պրծնում, որոչեր եմ՝ մարթիս թողեմ, քեզի առնեմ:

Էտ վախտ փողի տերը ներս մտավ.—Դատավո՛ր, շատ եմ խնդրում, չորս հարիր մանեթս տո՛ւր:

Սիրած կնգա մոտը դատավորը չուզեց ղալմաղալ անա, փողը վերցեց քցեց էս մարթին, որ շուտ էթա:

Էտ ժամանակ տղեն ներս մտավ, ասավ.—Մորքո՛ւր, աչքդ լուս, մարթտ էկավ:

Էս որ ասավ, կնիկը հանեց տղին իրեք մանեթ մուշտուլուղ տվեց: Տղեն սկսեց պարել, տաչի կանչել:

Փող ստացողն ու էս կնիկն էլ սկսեցին պարել: Դատավորն էլ սկսեց պարել:

Էս կնիկն ասավ.—Դատավո՛ր, էս տղեն պարում ա, որ իրեք մանեթ ստացավ, էս մարթը պարում ա, որ իրա չորս հարիր մանեթն ստացավ, ես էլ պարում եմ, որ մարթս էկավ, դո՞ւ հընչի ես պարում:

—Ես էլ պարում եմ, որ քո նման լրփից պրծա,—ասավ դատավորը:

Պարը վերջացրին գնացին իրանց գործին:

էս բանվոր մարթը դատարանից դուս գալուց հետո գտավ էն մարթին, որ պտի ճամբեն նշանց տա, խնդրեց, որ տանա Հէրեան էթող վաճառականների մոտ: Էս մարթը տարավ, իրեք մանեթ ստացավ, գնաց: Բանվորը վաճառականների հետ ճամբա ընկավ:

Որ գնացին, տեսան՝ մե մարթ նստե ճամփեքի խաչմերուկում, շորը փռե, իրեք ծալուկ թուղթ ա դրե շորի վրեն, ինքը նստե կողը ու ասում ա.—Առնողը չի փոշմանի, առնողը չի փոշմանի:

—Ի՞նչ ես ծախում, ա՛յ պապե, որ առնողը չի փոշմանի:

—Խրատ եմ ծախում, որթի՛, լա՛վ խրատ:

—Դե մե խրա՛տ տուր էթամ:

—Խրատը փողով ա, բալա՛, թղթի վրեն գրուկ ա:

—Ի՞նչ արժի մե խրատը, պապե՛, ասա՛, տամ:

—Խրատը հարիր մանեթ ա, բալա՛:

Էս մարթը մտածեց ու ասավ.—Ջայնամ թե քյասիբ եմ, ա՛ն էս հարիր մանեթը, մե խրատը ասա՛, քո խրատը կրկատարեմ:

Վաճառականները ծծղացին մեամիտ տղի վրեն:

—Թուղթը դու վերցո՛ւ, կարթա՛, թե կարթալ չես իմանում, ես կրկարթամ, —ասավ պապեն:

Էս մարթը մե թուղթ վերցրեց, ծալը բացեց կարթաց. «Որ մթնի, քարվանսարա գնացիր, չըքնես: Բոլորը կըքնեն, դու մի՛ քնի, ինչքան քունդ գոռա»:

—Պապե՛, ա՛ն հարիր մանեթ, մեկ էլ եմ բացում:

Բացեց. «Մութն ընկնելուն պես ուր հասար, էտ տեղը մաց, հառեչ չէթա՛ս, վնաս կըքաչես»:

—Ա՛ն հարիր մանեթ, էն մեկն էլ բացեմ:

Բացեց: Գրած էր. «Ջղայնացած ժամանակ մտածածտ չըկատարես, հետաձգա՛ մյուս օրվան»:

Էհ, մտածում ա. «Հինգ տարվա աշխատանքս գցի ջուրը»: Վաճառականները շատ ծծղացին էս անխելք մարթի վրեն, ձեռ առնելով, խոսալով գնացին հասան մե քարվանսարայ: Էս քարվանսարի տերը վարթապետ էր: Բոլորը արխային քնան: Վարթապետի քարվանսարայ ա, տերը սուրփի մարթ ա, չեն վախենում, արխային են: Վարթապետն էլ ասավ. «Օրհնվածնե՛ր, հանգի՛ստ քնեք, իմ քարվանսարայում ապահովություն ա»: Էս մարթի քունը չի տանում, մտածում ա՛ հարիր մանեթ ա տվե էս խրատին, ո՞նց քնի: Որ բոլորը քնան, էս մարթը տեսավ, որ վարթապետը էկավ, ամեն բեռից մե բան հանեց տարավ սրախը: Փեյին էր լցած, փեյինը ետ տվեց, մե պստի դուռ բացվավ: Էտ դռնով գողացածը տարավ պաղվալը, էլի փեյին տվեց հառեչը, դուռը ծածկեց: Վարթապետը գնաց, ինքը էկավ, իրա տեղը պարկավ: Ոչ մեկին բան չասավ, թե ինքն ինչ ա տես:

Լուսը որ բացվավ, դանձադանն ընկավ քարվանսարեն: Մեկն ասում ա, որ ոսկիս են տարել, մեկն ասում ա՝ մարգարիտ են տարել, մեկն ասում ա՝ լավ կտորեղեն են տարել: Հազար ու մե բան:

Դեռ արին, դեն արին, ասին, որ «Մեր մեջ էս մարթն ա օտար, կա-չըկա, գողն էտ ա»: Էս մարթի յախեն բռնին:

—Ա՛յ վաճառականներ, դուք Աստված ունեք, ես ձեր ընկերն եմ, շառով մի՛ տվեք, ուրիշ արբանք չունեմ, ծանոթ չունեմ, ես ձեր հույսով ճամբա ընկա, ընձնից հեռո՛ւ կացեք:

—Մեր միջի գողը դու ես:

Վարթապետի հետ խորուրթ արին, որոշին էս մարթին տանեն թաքավորի մոտ, կախել տան: Տեսավ, որ գողում են, ընկավ առաջ, գնաց թաքավորի պալատը, ձեռները դրեց դոշին, կայնավ: Վարթապետը զեկուցեց, որ էս մարթը գող ա, ընկերներից ոսկի, մարգարիտ, թանկագին կտորներ ա գողացե, պահե՛ր ա: Հարգավոր ա էս տեսակ մարթին կախել: Վարթապետն ա զեկուցե, թաքավորը ո՞նց չըհավատա: Վաճառականներին էլ հարցրեց, հաշվին, որ տասը հազարի բան ա գողացե:

—Ա՛յ մարթ,—ասավ թաքավորը,—քո խոսքն ասա՛, որ քեզի չարթարացնես, հրաման կըտամ կախելու:

—Թաքավո՛ր, ես ուամ գցող եմ, ժամանակ տո՛ւր՝ էրկու սհաթ ուամ գցեմ, հետո որոշում հանեք:

—Իրավունք ա: Պահակնե՛ր, տարե՛ք մե օթաղ, զգո՛ւչ հելեք, չըփախնի, թող ուամ գցա:

Էս մարթը մե թուղթ ու մատիտ ուզեց: Բերեցին: Նստավ նկարեց քարվանսարայի պլանը ու գրեց ոտանավորի նման մե բան:

Մե պստի դուռ,
Մե յանը ծուռ,
Մե փոչոտ գող,
Մե յաչիկ փող:

Առաջը փայեն,
Թո էթան նայեն,
Մեղին դատեն,
Անմեղին ազատեն:
Տերը մոտը,
Թալազը ոտը:

Էրկու սհաթ հետո պահակները դուռը տփին:

—Ռամդա՛ր, ժամանակը թմմավ, էթանք:

Ձեն չըկա: Մեկ էլ ձեն տփին: Ձեն չըկա:

—Գողը փախեր ա, որտեղի՞ց փախավ:

Իրար խառնվան: Պահակապետը ներս մտավ, տեսավ՝ ուսմուշ-
րը քնուկ ա: Զարթնցուց, տարավ թաքավորի մոտը:
Թաքավորն ասավ.—Ի՞նչ արիր, ուսմուշ՝, գտա՞ր:
—Գտա, թաքավո՛ր, բա կըթողեմ էտքան փողը կորի՞:
Վարթապետը, վաճառականները իրար հերես հիշկացին: Վար-
թապետը նիյաթը կախեց, վաճառականներն ուրխցան:
—Դե ասա՛ տենամ, որտե՞ղ ա:

Մե պստի դուռ,
Մե յանը ծուռ,
Մե փոչոտ գող,
Մե յաշիկ փող:

Առաչը փայեն,
Թո էթան նայեն,
Մեղին դատեն,
Անմեղին ազատեն:
Տերը մոտը,
Թալազը ոտը:

—Ես դրանից բան չըհասկացա, ա՛յ ուսմուշ, պա՛րզ
ասա,—ասավ թաքավորը:

—Նսպիեփա մարթ ա, կախե՛լ,—ասավ վարթապետը:

—Զեռ ա առնում,—ասին վաճառականները:

—Ժամանակ տվե՛ք, թո բացատրա,—ասավ թաքավորը:

—Թաքավո՛ր, քսան-եռեսուն զինվոր վերցրո՛ւ, էթանք, տեղը
նշանց տամ: Փայենը ու փոչոտին տեսեր եմ: Թաքավորը վերցուց
հարիր մարթ, գացին ուղիղ քարվանսարեն: Թաքավորի, վարթա-
պետի ու մե քանի զինվորի հետ մտան սրախը:

—Թաքավո՛ր,—ասավ ուսմուշը,—էս փայե՞ն ա:

—Փայեն ա:

—Փայենը ե՛տ տվեք:

Ետ տվին:

—էս պստի դո՞ւռ ա, մե յանը ծո՞ւռ ա:

—Դուզ ա,—ասավ թաքավորը:

—Մե փոչոտ գող, ասե՞ր եմ: էս վարթապետն ա:

Թաքավորը հրաման տվեց վարթապետին բռնեն:

—Մե յաշիկ փող, ասե՞ր եմ: Մտե՛ք, տեսե՛ք:

Ճրաք արին, մտան: Ի՞նչ մե յաշիկ, տասը յաշիկ:

—Գողը՝ մոտը, թալազը՝ ոտը, ասե՞ր եմ:

Վարթապետին թալազն եք գցել:

Մեղին դատեն, անմեղին ազատեն:

Գողացած բոլոր աբրանքները տվին տերերին, էս մարթին էլ հազար ոսկի տվին, մնացածը տարան թաքավորի գանձարանը: Վարթապետին կախին: Վաճառականներին էլ ասին, որ էս մարթին անվնաս տեղ հասցնեն: Վաճառականներն էլ նվեր տվին, մե ջորի էլ տվին, որ իրա նվերները բառնա, տանա:

էս մարթիք ճամբա ընկան, գնացին: Իրիկունը հասան մե գեղ: էս մարթն ասավ՝ մնանք, վաճառականներն ասին՝ էթանք: Վաճառականները գնացին, էս մարթը մնաց:

Առավոտը իրա ջորու չմբուլից բռնեց գնաց: Տեսավ՝ գիշերը բուք ա հելե, բոլորը խելստվեր են՝ հիրանք էլ, ջորիքն էլ: էլի ոսկի գտավ, իրա ջորուն բարցեց, հընգավ ճամբա: Իրեք օր հետո էկավ իրա տունը: Գիշեր էր: Ակուշկից հիշկաց, տեսավ իրա կնիկը մե ջահել տղի գրկե, քներ ա: Գնաց, բալթեն վերցեց, էկավ, որ էրկուսին էլ սպանա: Միտն ընկավ բիձի ասածը, որ հերստոված ժամանակի մտածածը թողա հէքուցվան:

Բալթեն ձեռից թալեց, ջորու բեռն իչացրեց, ջորու առեչը խոտ դրեց, նստավ: Նստավ ու քնավ: Մեկ էլ կնգա ձենը լսաց:

—Աչո՛տ, Աչո՛տ, հելի՛, հայրիկտ էկեր ա:

էս մարթը զարթնավ, տեսավ՝ տեղից հըլնողը տղեն ա: Մերը չէր թողում, որ տղեն մենակ քնի: էստեղ մարթ, կնիկ, հեր, տղա փաթթվան իրար: Ըտոնք հասան հիրանց մուրազին, դուք էլ հասանք ձեր մուրազին: Մեծի խրատը ոսկի ա:

